զիս. եւ երրորդում օրն հիւանդացայ հիւանդութիւն մեծ եւ անկայ իբրեւ մեռեալ: Երկու չարաթ զիս թէուլէթմէն նեղեց. ապա սակաւ մի զլուխ խելք եկաւ, տեսի օտաս թալնած էր եւ բան մի չէր թողած. բայց կայր պառաւ մի երկիւղած, որ Աստուծոյ սիրուն համար ինձի պէտ կ'առնէր. նա ասաց ինձ թէ Պէյթալմալճին էկաւ տեսաւ զքեզ խիստ զապուն էիր, առաւ տարաւ զամէն քուրդ. ապա մի հազար, բան մի չի կորիր, զէրա թղթով գրով է, երբ ողջանաս՝ դարձնէ քեզ զամէնն:

Եւ ես ելեալ չրջէի եղեգնեայ դաւազանին վրայ դողդողջալով եւ առեալ զքսուրս ծախէի: Եւ մինչ ի այս տկարութեանս էի ես, ահա տվին ինձ գիր թէ չուտ հասիր, Իբրայըլ խօճայ Կիրակոսն այն մեռաւ, որ դուն ամանաթ էիր քոմ թողել. եւ զինչ ունէր՝ զամէնն Պէյթալմալճին առաւ. զոր ես տկար գոլով բռնեցի ջորի եւ հասեալ անդր թէ պէտ առնեմ ապրանացս. կալաւ զիս մալիմէյիթչին եւ եդ ի բանտի, թէ դու նորա օրդախն ես. նորա չատ մալ կայ մօտ քեզ: Զոր լսեալ բարի եւ լաւ մարդկաց՝ մէջ մտան, դրամ տվին, հազիւ զերծուցին զիս ի ձեռաց բռնաւորաց: Եւ այն հոգսուս կրկնվածք եղայ եւ անկայ ի մեծ հիւանդութիւն, առաւել քան զառաջինն. եւ ոչ դեղ, ոչ այլ ինչ օկտէր ինձ, զի յոյժ մեծ տենտ եւ տագնապ ունէի ես մինչեւ հինգ ա-

16 հիւանդացա: — 22 պէյթալմաճին: — 24 արաւ: — 27 եղեգնեա: — 33 արաւ: — 40 կրկվածք եղա: